ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ «ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎՐՈՊԱ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՀԿ-Ի ՏԱՐԱԾԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

27.07.2016 17:16

«Իրավունքի Եվրոպա Միավորում» հասարակական կազմակերպությունը 27.07.2016թ. հայտարարություն է տարածել «Սասնա ծռեր» խմբի անդամ Աշոտ Պետրոսյանի պաշտպանների փաստաբանական գործունեությանը խոչընդոտելու վերաբերյալ, որտեղ, ի թիվս այլոց, պահանջել է «զերծ մնալ նրանց (*«Սասնա ծռեր» խմբի մյուս անդամներին*) զարտուղի ճանապարհներով հրավիրված հանրային պաշտպանի ծառայությունները պարտադրելուց»: Այս կապակցությամբ պարզաբանում ենք հետևյալը.

«Հայտարարության» մեջ հանրային պաշտպանների՝ քրեական գործով վարույթին ներգրավելու վերաբերյալ արված պնդումները ոչ միայն չեն համապատասխանում իրականությանը և հանրությանը մոլորեցնելու նպատակ ունեն, այլև վկայում են հասարակական կազմակերպության ոչ արհեստավարժ գործունեության մասին:

Հանրային պաշտպանի գրասենյակը քրեական գործերով հանրային պաշտպան տրամադրում է միայն վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա: Այսպես, ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության կողմից 26.07.2016թ. կայացվել են որոշումներ Աշոտ Գարուշի Պետրոսյանի և Հովանես Գառնիկի Հարությունյանի շահերը պաշտպանելու համար քրեական գործով հանրային պաշտպան ներգրավելու վերաբերյալ:

Հանրային պաշտպանի գրասենյակը պարտավոր էր, ի կատարումն քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումների, գործերը հանձնել հանրային պաշտպաններին, ինչը և կատարել է՝ 26.07.2016թ. ժամը 14:30-ի սահմաններում Աշոտ Գարուշի Պետրոսյանի գործը հանձնվել է հանրային պաշտպան Մերի Ալավերդյանին, իսկ Հովհաննես Գառնիկի Հարությունյանի գործը՝ հանրային պաշտպան Լյուդվիգ Ավետիսյանին:

Նշված հանրային պաշտպանները կարող էին պաշտպանի իրավիճակ ձեռք բերել Աշոտ Գարուշի Պետրոսյանի և Հովանես Գառնիկի Հարությունյանի համաձայնությունը ստանալու պահից միայն: Աշոտ Գարուշի Պետրոսյանը և Հովանես Գառնիկի Հարությունյանը տվել են իրենց համաձայնությունը:

Հանրային պաշտպանի գրասենյակը և հանրային պաշտպանները գործել են օրենքով սահմանված կարգով:

Ինչպես նշված է հայտարարության մեջ, հասարակական կազմակերպության հրավիրած փաստաբան Արայիկ Պապիկյանը, Աշոտ Պետրոսյանի զավակների դիմումի հիման վրա ցանկացել է «Էրեբունի» բժկական կենտրոնում տեսակցել վերջինիս, տեսակցությունը համաձայնեցնելով «բժշկական անձնակազմի համապատասխան ներկայացուցիչների» հետ, սակայն չի կարողացել տեսակցել, քանի որ անվտանգության աշխատակիցը փաստաբանին թույլ չի տվել մուտք գործել հիվանդասենյակ:

Փաստաբանական գործունեություն իրականացնող յուրաքանչյուր անձի համար պարզ է, որ պաշտպանյալին տեսակցելու համար փաստաբանը նախևառաջ պետք է ստանձնի անձի պաշտպանությունը՝ ներգրավվելով քրեական գործով վարույթին՝ ներկայացնելով իր դիմումը և Աշոտ Պետրոսյանի զավակների՝ քրեական վարույթն իրականացնող մարմնին ուղղված դիմումը: Բացի այդ, Աշոտ Գարուշի Պետրոսյանի համաձայնությունը ստանալուց հետո միայն փաստաբան Արայիկ Պապիկյանը կհամարվեր **վերջինիս պաշտպանությունը ստանձնած պաշտպան: Սակայն, ինչպես երևում է «Հայտարարության» տեքստից, մասնավոր կարգով հրավիրված փաստաբանը փորձել է դիմումը մուտք անել ժամը 17:55-ին,** հանրային պաշտպանին գործը հանձնելուց և հանրային պաշտպանի կողմից գործով վարույթին ներգրավվելուց հետո:

Հետևաբար, պնդումը, թե հանրային պաշտպան Մերի Ալավերդյանին, ի տարբերություն Արայիկ Պապիկյանի, հաջողվել է մտնել հիվանդասենյակ և հանդիպել Աշոտ Պետրոսյանին, պայմանավորված է նրանով, որ ի տարբերություն փաստաբան Արայիկ Պապիկյանի, Մերի Ալավերդյանը ստանձնել է Աշոտ Պետրոսյանի պաշտպանությունը:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ Աշոտ Պետրոսյանին թույլ չի տրվել կապի մեջ մտնել զավակների հետ և որևէ կերպ չի տեղեկացել, որ ինքն ունի իր զավակների կողմից ընտրված պաշտպան՝ արդյունքում զրկվելով իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունքից, **ապա «Հայտարարություն» տարածողը պետք է իմանար, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ նման պարտականություն կրում է վարույթն իրականացնող մարմինը: Այնուհանդերձ, հարկ է նշել, որ Մերի Ալավերդյանի կողմից Աշոտ Պետրոսյանին բացատրվել է, որ վերջինս ունի իր ընտրած պաշտպանի միջոցով պաշտպանվելու իրավունք, սակայն Աշոտ Պետրոսյանը ցանկացել է, որ իր շահերի պաշտպանությունն իրականացնի Մերի Ալավերդյանը:**

«Հայտարարության» մեջ արված մեկ այլ պնդման հետ կապված, թե ըստ Աշոտ Պետրոսյանի դստեր՝ Տաթևիկ Պետրոսյանի իրենք գիտեին հանրային պաշտպանի գրասենյակի ծառայությունների մասին և չեն դիմել դրան, և որ իրավիճակին ծանոթ լինելու և ինֆորմացիա ունենալու դեպքում իրենց հայրը ևս չէր ընդունի հանրային պաշտպանի ծառայությունները, ապա հարկ է նշել, որ փաստաբանական գործունեության հետ քիչ թե շատ առնչություն ունեցող **յուրաքանչյուր անձի հայտնի է, որ քրեական գործերով կասկածյալին կամ մեղադրյալին հանրային պաշտպան տրամադրվում է ՄԻԱՅՆ վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա և ՄԻԱՅՆ կասկածյալի կամ մեղադրյալի ցանկությամբ կամ արդարադատության շահի հիմնավորմամբ, այլ ոչ թե վերջիններիս ընկերների և հարազատների դիմումների հիման վրա: Կարծում ենք, որ հասարակական կազմակերպերությանը պետք է հայտնի լինի**

հանրային պաշտպան տրամադրելու ընթացակարգը, նման տեղեկատվության տարածումը, մեր կարծիքով, ընդամենը հետապնդում է ընթերցողին մոլորեցնելու և հանրային պաշտպանի գրասենյակի աշխատանքը ստվերելու նպատակ, ինչը համահունչ է հասարակական կազմակերպության՝ հանրային պաշտպանի գրասենյակի դեմ վերջին ժամանակներում իրականացված քաղաքականությանը:

Այդուհանդերձ, ցանկանում ենք նշել, որ թե՛ Աշոտ Պետրոսյանը, և թե՛ Հովհաննես Հարությունյանը կարող են ցանկացած պահի հրաժարվել հանրային պաշտպանի ծառայություններից, այդ պարագայում հանրային պաշտպանի կողմից անվճար իրավաբանական օգնության տրամադրումը կդադարեցվի անմիջապես:

Ամփոփելով վերոգրյալը՝ անհրաժեշտ ենք համարում ևս մեկ անգամ նշել, որ ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակը գործել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի սահմաններում, հանրային պաշտպաններին գործերը հանձնվել են վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա:

Ուստի, «Իրավունքի Եվրոպա» հասարակական կազմակերպությանը հորդորում ենք ձեռնպահ մնալ հանրային պաշտպանի գրասենյակի աշխատանքը և առանձին հանրային պաշտպանների բարի համբավը արատավորելու՝ սեփական շահերով թելադրված արատավոր գործելաոճից:

ՀՀ փաստաբանների պալատի

Հանրային պաշտպանի գրասենյակի

ղեկավարի տեղակալ՝ Վարսեր Կարապետյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })